ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ ՎԱՀԱԳՆԻ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН НАРЕК ВААГНОВИЧ

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ОРГАНИЗАЦИЮ НЕЗАКОННОЙ МИГРАЦИИ: ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – «уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս.Վ. Առաքելյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Ռ. Մարգարյան**
	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Տ.Վ. Սիմոնյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Ռուս-Հայկական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 2-ին ժ. 14:30-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ.Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в Ереванском
государственном университете

Научный руководитель:	доктор юрид. наук, профессор **С.В. Аракелян**
Официальные оппоненты:	доктор юрид. наук, профессор **А.Р. Маргарян**
	кандидат юридических наук, доцент **Т.В. Симонян**
Ведущая организация:	**Российско-Армянский университет**

Защита состоится 2-го июня 2026 года в 14:30 часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 30-го апреля 2026 года.

Ученный секретарь специализированного
совета: канд. юрид. наук, ассистент **Ж.А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գլխավոր քարտուղար Քոֆի Անանի «2002 թվականի միջազգային միգրացիայի մասին» զեկույցում արդարացիորեն նշվում էր, որ բնակության վայրը փոխելու ձգտումը մշտապես եղել է մարդու հիմնական բնութագրիչներից մեկը: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» ընդունմամբ մարդու տեղաշարժի ազատության իրավունքը միջազգային ճանաչում է ստացել: Մասնավորապես, այդ Հռչակագրի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և բնակավայր ընտրելու ամեն մի պետության սահմաններում:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ նաև սեփականը, և վերադառնալու իր երկիրը»:

Գլոբալացման դարաշրջանում միջազգային միգրացիայի՝ որպես զարգացման նշանակալի գործոնի դերը և կարևորությունն առավել ակնհայտ են դառնում: Տվյալ հանգամանքը հատկապես արտահայտվում է պետությունների միջև մարդկային կապիտալի՝ որակավորված աշխատուժի համար ծավալվող մրցակցային պայքարում: Բնականաբար, այդ մրցակցությունում չպարտվելու համար, անհրաժեշտ է ապահովել ժամանակակից պատշաճ միգրացիոն քաղաքականություն:

Բնակչության միգրացիան բավականին բարդ և բազմաբովանդակ գործընթաց է, որը պայմանավորված է տարատեսակ քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, կազմակերպակառավարչական, հոգեբանական և այլ գործոններով: Դրա ծավալներն ամբողջ աշխարհում էականորեն ընդլայնվել են հատկապես վերջին տարիներին, ինչը գլխավորապես աշխարհի տարբեր հատվածներում զինված հակամարտությունների արդյունք է:

Հայաստանի Հանրապետության՝ որպես նախկին ԽՍՀՄ երկրի, իսկ ներկայում՝ Անկախ պետությունների համագործակցության, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համար միգրացիայի և միգրացիոն քաղաքականության հետ կապված հարցերը առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20.05.2021 թ. թիվ 801-Լ որոշման Հավելված 1-ի ամփոփ համառոտագրում նշվում է՝ «(...) 5. Հիմնվելով միգրացիոն ոլորտի ներկա իրավիճակի և առկա հիմնախնդիրների գնահատման, ինչպես նաև միգրացիոն նոր հոսքերի վերաբերյալ կանխատեսումների վրա՝ սույն հայեցակարգում ձևակերպված են միգրացիայի կառավարման ինը նպատակ.

1) միգրացիայի կառավարման և Հայաստանի Հանրապետության ժողո-

վրդագրական իրավիճակի բարելավման և հայրենադարձության քաղաքականությունների միջև փոխառնչակցությունների մեծացում.

2) ***անկանոն և անօրինական միգրացիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում.***

3) սահմանների, մուտքի, ելքի և օտարերկրացիների կացության կառավարման արդյունավետության բարձրացում.

4) միգրանտների տարբեր խմբերի իրավունքների և շահերի պաշտպանության բարելավում, միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործում.

5) Հայաստանում օտարերկրացիների ինտեգրման և վերադարձողների վերաինտեգրման կազմակերպման բարեփոխում, ինչպես նաև Հայաստանում օտարերկրացիների ընդունման միջավայրի բարելավում.

6) Հայաստանի կայուն մարդկային զարգացման վրա միգրացիայի ազդեցության մեծացում.

7) միգրացիոն ճգնաժամերին արձագանքելու պատրաստվածության մեծացում.

8) միգրացիայի կառավարման ոլորտում միջազգային և ներպետական համագործակցության ընդլայնում.

9) միգրացիայի կառավարման համակարգվածության, միասնականության և արդյունավետության բարձրացում (...)»:

Վերոգրյալից հետևում է, որ նշված Հայեցակարգի հիմնական նպատակներից է անօրինական միգրացիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը: Այդ առումով հարկ է նշել, որ տվյալ հանգամանքը բխում է նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից, որոնք, մասնավորապես, նախատեսված են «Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան լրացնող՝ ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ Արձանագրությունում», «Աշխատանքի միջազգային կազմակերպության միգրանտ աշխատողների մասին Կոնվենցիայում», ինչպես նաև «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի մասին Կոնվենցիայում»:

Տվյալ համատեքստում հատկապես պետք է կարևորել անօրինական միգրացիայի կազմակերպման քրեականացման և համապատասխան քրեաիրավական կարգավորումների պատշաճ ու արդյունավետ կիրառման ապահովման անհրաժեշտությունը: Այդ տեսանկյունից էական նշանակություն կարող են ունենալ համապատասխան գիտական հետազոտությունները, որոնք հիմք կհանդիսանան ՀՀ գործող օրենսդրության կատարելագործմանը և իրավակիրառ գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված տեսական բազայի ձևավորման համար:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ ատենախոսական սույն աշխատանքի թեմայի ***արդիականությունը*** և դրա շրջանակներում իրականացված հետազոտության ***հրատապությունը*** որևէ կասկած չեն հարուցում:

Բացի այդ, ատենախոսական սույն հետազոտության արդիականության մասին են վկայում նաև Հայաստանի Հանրապետությունում անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերի անբարենպաստ միտումները (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Անօրինական միգրացիայի կազմակերպման շարժընթացը ՀՀ-ում 2015-2023 թվականների ժամանակահատվածում

Տարի	Ընդամենը գրանցված հանցագործություններ	Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (հանցավ. կառուցվածքում մասնաբաժին)	Անօրինական միգրացիայի կազմակերպում (կառ. կարգի դեմ ուղղվ. կառուցվ. մասնաբաժին)
2015	17 043	494 (2,89%)	12 (2,42%)
2016	18 764	383 (2,04%)	13 (**3,39%**)
2017	20 284	2 263 (**11,2%**)	14 (0,61%)
2018	22 551	2 126 (9,42%)	12 (0,56%)
2019	26 850	1 898 (7,06%)	10 (0,52%)
2020	26 468	1 683 (6,35%)	10 (0,59%)
2021	30 245	1 678 (5,54%)	6 (0,35%)
2022	37 612	1 971 (5,24%)	7 (0,35%)
2023	**40 666**	**2 649** (6,51%)	**24** (0,90%)

Ներկայացված աղյուսակից, մասնավորապես, հետևում է, որ քննարկվող ժամանակահատվածում ընդհանուր հանցավորության շարժընթացում արձանագրվել է անընդհատ աճ: Բացառություն է 2020 թվականը, որի պարագայում գրանցված բոլոր հանցագործությունների քանակը, նախորդ տարվա համեմատ, չնչին նվազել է: Մինչդեռ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարժընթացում իրավիճակն այլ է. 2016թ. (2015թ. համեմատ) արձանագրվել է դրանց նվազում, 2017թ. (2016թ. համեմատ)՝ կտրուկ աճ, 2017-2021 թթ.՝ անընդհատ նվազում, իսկ 2021-2023 թթ.՝ կրկին աճ:

Անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերի շարժընթացի պարագայում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. 2015-2017 թթ. դրանք անընդհատ աճել են, 2017-2021 թթ.՝ նվազել, իսկ այնուհետև կրկին աճել: Դրանց ամենակտրուկ աճն արձանագրվել է 2022-2023 թթ.: Ընդ որում, դրանց ամենամեծ թիվն արձանագրվել է 2023 թ., իսկ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը՝ 2016 թվականին:

Թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Միջազգային հարաբերություններում և աշխարհի շատ երկրներում ներկայումս լուրջ մտահոգության տեղիք տվող անօրինական միգրացիայի կազմակերպման քրեաիրավական հիմնախնդիրները տարբեր տարիների տարատեսակ գիտահետազոտական ուսումնասիրությունների առարկա են դարձել: Դրանց շարքում հարկ է առանձնացնել Լ.Ս. Բիսսոնի, Ս.Ա. Բուչակովի, Մ.Ա. Ելիսեևի, Է.Խ. Կախբուլանայի, Ռ.Կ. Կեչեռուկովի, Ա.Յու. Կռասնովի, Ե.Ա. Պոպովայի, Տ.Ն. Ուտոռովայի, Դ.Դ. Ֆոմենկոյի և այլ հետազոտողների աշխատությունները: Նշված հետազոտությունները, սակայն չեն առնչվել հայաստանյան իրողությանը:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ Կ.Լ. Աթոյանի, Ս.Վ. Առաքելյանի, Ս.Ս. Ավետիսյանի, Պ.Վ. Մկրտչյանի, Ի.Ա. Ալեշկովսկու, Լ.Վ. Անդրիչենկոյի, Է.Ռ. Բայբուրինայի, Գ.Ն. Բորզենկովի, Լ.Ա. Բուկալերովայի, Լ.Դ. Գաուխմանի, Է.Ռ. Գոլուբևայի, Մ.Բ. Դենիսենկոյի, Ս.Վ. Դյակովի, Բ.Յ. Ժալսանովի, Լ.Վ. Ինոգամովա – Խեգայի, Վ.Ա. Իոնցևի, Յու.Ի. Լյապունովի, Վ.Վ. Լունեևի, Օ.Ա. Խարաևայի, Ի.Յա. Կոզաչենկոյի, Վ.Ս. Կոմիսարովի, Լ.Ս. Կոմովկինայի, Վ.Ն. Կուդրյավցևի, Օ.Ա. Միխալի, Ա.Վ. Նաումովի, Գ.Պ. Նովոսյոլովի, Ն.Ա. Չերեմնովայի, Օ.Ս. Չուդինովսկիխի, Ի.Վ. Պլյուգինայի, Դ.Ն. Շուրուխնովայի, Ս.Վ. Շևելյովայի, Ա.Ի. Ռարոգի, Լ.Վ. Սերդյուկի, Ն.Ի. Վետրովի, Մ.Ն. Ուրդայի, Ե.Վ. Ֆուրսայի և այլոց՝ ուսումնասիրության թեմային առնչվող աշխատությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության **օբյեկտը** անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվության քրեաիրավական հիմնախնդիրներն են Հայաստանի Հանրապետությունում, իսկ **առարկան**՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշները, ինչպես նաև քննարկվող հանցագործության ծանրացնող հանգամանքները և հարակից հանցավոր արարքներն ու վարչական իրավախախտումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական սույն աշխատանքի առաջնային **նպատակն է** ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում անօրինական միգրացիայի կազմակերպման քրեաիրավական առանձնահատկությունները, ինչպես նաև դրա հիման վրա, ՀՀ քրեական գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումն ու ներկայացումը: Դրված նպատակին հետամուտ՝ հեղինակն առաջնորդվել է հետազոտական հետևյալ **խնդիրների** լուծման անհրաժեշտությամբ.

– բացահայտել բնակչության միգրացիայի էությունը, տեսակները և դրսևորման հիմնական ձևերը,

– ամփոփել և վերլուծել անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային իրավական կրգավորումները,
– համեմատական վերլուծության ենթարկել արտասահմանյան երկրներում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն նախատեսող քրեական օրենքները,
– բացահայտել անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկություններն ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության,
– ուսումնասիրել և պարզաբանել անօրինական միգրացիայի կազմակերպման՝ ՀՀ քր. օր.-ով նախատեսված առավել վտանգավոր տեսակները,
– սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված անօրինական միգրացիայի կազմակերպումը հարակից հանցագործություններից և վարչական իրավախախտումներից:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության նորմատիվ-իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Պետական սահմանի մասին» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև թեմային առնչվող միջազգային իրավական փաստաթղթերը, արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենքները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսական սույն հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել, ինչպես ընդհանուր (համընդհանուր դիալեկտիկական), այնպես էլ մասնավոր (իրավահամեմատական, ձևական-իրավաբանական վերլուծության, համակարգային-կառուցվածքային վերացարկման, վիճակագրական և այլն) գիտական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը նախ և առաջ կայանում է նրանում, որ դրա հեղինակը, հայրենական իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ, համակարգված և համալիր վերլուծության է ենթարկել Հայաստանի Հանրապետությունում անօրինական միգրացիայի կազմակերպման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում**.

1. ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 1-ին և 2-րդ մասերով, ըստ էության, նախատեսված են հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող գրեթե նույն արարքները և լրիվ նույնական սանկցիաներ: Տարբերությունն այն է, որ մի դեպքում, խոսքը օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կազմակերպելու մասին է, իսկ մյու-

սում՝ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը, կամ օտարերկրյա պետությունում գտնվելը կազմակերպելու: Ի դեպ, նշված երկու դեպքերում էլ արարքը բնութագրվում է շահադիտական նպատակով և մուտքի (ելքի), գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի (ելքի), գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Հետևաբար, օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից, ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներն առավել նպատակահարմար է միավորել մեկ մասում, հետևյալ բովանդակությամբ՝ «1. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը, կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը), կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը, կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, ելքի, գտնվելու, կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, ելքի, գտնվելու, կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ, կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով՝ (...)»:

2. Անօրինական միգրացիայի կազմակերպողն այդ գործընթացի անմիջական մասնակից չի հանդիսանում: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետություն մուտք են գործում, Հայաստանի Հանրապետությունում գտնվում կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխվում են, կամ՝ Հայաստանի Հանրապետությունից ելք կամ օտարերկրյա պետություն մուտք են գործում, կամ օտարերկրյա պետությունում գտնվում են այլ անձինք: Անօրինական միգրացիա կազմակերպողը (ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտը) նպաստում է դրան, ապահովում այն, պայմաններ ստեղծում դրա համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Հետևաբար, քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի բովանդակությունն է կազմում փոխկապակցված հետևյալ դրսևորումների համակցությունը՝ 1) բուն անօրինական միգրացիայի և 2) դրա կազմակերպման:

3. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ անօրինական միգրացիան ինքնին հանցագործություն չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմի հատկանիշները: Ուստի, ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության պարագայում գործ ունենք ոչ թե հանցագործության կազմակերպչի՝ որպես հանցակցի, այլ անօրինական

միգրացիա կազմակերպողի՝ որպես հանցանքը կատարողի հետ:

Ըստ այդմ, անօրինական միգրացիայի կազմակերպում ասելով՝ հարկ է հասկանալ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Հայաստանի Հանրապետություն մուտքին, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելուն կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցմանը (տեղափոխմանը), ինչպես նաև անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքին, օտարերկրյա պետություն մուտքին կամ օտարերկրյա պետությունում գտնվելուն ուղղված գործողություններով ցանկացած եղանակով նպաստելը, դա ապահովելը, դրա համար պայմաններ ստեղծելը՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

4. ՀՀ քրեական օրենսգրքում մի շարք հանցակազմեր ձևակերպելիս օրենսդիրն օգտագործում է «շահադիտական» իմաստն արտացոլող՝ իրարից տարբերվող տերմինաբանություն: Մասնավորապես, հանցավոր առանձին արարքների սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների շարքում, որոշ դեպքերում, նախատեսված է շահադիտական նպատակը, մյուսներում՝ շահադիտական դրդումները, կամ շահադիտական շահագրգռվածությունը: Ավելին, մի շարք հոդվածներում տեղ է գտել «շահադիտական նպատակով կամ այլ ստոր դրդումներով» ձևակերպումը, որում, ըստ էության, նույնացվում են «նպատակ» և «դրդում» հասկացությունները, ինչը չի կարող արդարացված համարվել, քանզի շարժառիթն ու նպատակը թեև սերտորեն փոխկապակցված, բայց նաև իրարից տարբերվող և ինքնուրույն երևույթներ են:

Ուստի, անհրաժեշտ է «շահադիտական շարժառիթ (դրդում)» և «շահադիտական նպատակ» հասկացություններն օրենսդրորեն հստակ սահմանազատել և օրենքում այդ կապակցությամբ միատեսակ ձևակերպումներ կիրառել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահադիտական դրդումը (շարժառիթը)՝ որպես գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղում, միանշանակ ենթադրում է այնպիսի ցանկալի վերջնարդյունքի ձգտում, որը կապված է նյութական շահ ստանալու հետ, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ընդհանրապես հրաժարվել «շահադիտական նպատակ» հասկացության նախատեսումից՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով օրենսդրական փոփոխություններ:

5. Շահադիտական նպատակը, որպես քննարկվող հանցագործության հատկանիշ սահմանելը, խնդրահարույց է, քանզի որոշ դեպքերում նյութական օգուտ ստանալը կարող է հանդիսանալ ոչ թե հանցավորի նպատակ, այլ որոշակի այլ նպատակի հասնելու միջոց: Օրինակ՝ անօրինական միգրացիան կարող է կազմակերպվել անտուն մարդկանց բարեգործական կացարան կամ անօթևան կենդանիների անվճար ապաստարան կառուցելու նպատակով, որին հասնելու համար պահանջվում են նյութական միջոցներ:

Հնարավոր է նաև քննարկվող արարքի կատարումն, օրինակ, ընտանիքի անդամներին կամ այլ հարազատներին կամ ընկերներին վերաբնակեցնելու կամ նրանց հետ վերամիավորվելու նպատակով:

Ուստի, նման իրավիճակները ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով որակելը, կհակասի սահմանված իրավակարգավորումներին: Հետևաբար, անօրինական միգրացիա կազմակերպելու դեմ առավել արդյունավետ պայքար իրականացնելու համար իրավական պատշաճ հիմք ստեղծելու նկատառումներով, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածում՝ որպես տվյալ արարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նախատեսել դրա կատարումը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

6. Քննարկվող հանցագործության դեմ պայքարի քրեաիրավական բնույթի առավել արդյունավետ միջոցներ սահմանելու տեսանկյունից, առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես անօրինական միգրացիայի կազմակերպումը ծանրացնող հանգամանք, նախատեսել տվյալ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը: Օրենսդրական նման կարգավորման պարագայում առավել խիստ պատասխանատվություն կառաջացնի քննարկվող հանցանքը մի խումբ անձանց կողմից, ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց դրա կատարելը:

Բացի դրանից, կազմակերպված հանցավորության առավել բարձր հանրային վտանգավորությունը, հետևաբար նաև՝ դրա առանձին դրսևորումների համար առավել խիստ պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը հաշվի առնելով, առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի քննարկվող հոդվածը նոր մասով լրացնելը, որով կնախատեսվի անօրինական միգրացիայի կազմակերպման առավել ծանրացնող հանգամանք՝ նույն արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը:

7. Անօրինական միգրացիայի կազմակերպումը մարդու թե՛ կյանքի և թե՛ առողջության համար վտանգավոր պայմաններում կատարված որակելու համար չի պահանջվում, որպեսզի փաստացի նրան մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառվի: Այլ կերպ ասած՝ նշված հետևանքների փաստացի առաջացումը դուրս է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի շրջանակներից և պետք է որակվի լրացուցիչ: Ընդ որում, այդ առումով որևէ նշանակություն չունի՝ մարդու մահվան կամ նրա առողջությանը վնաս պատճառելու նկատմամբ հանցավորը դրսևորել է դիտավորությո՞ն, թե՞ անզգուշություն:

Մինչդեռ այս առումով ևս օրենսդրական առկա կարգավորումներին դժվար է համաձայնել: Մասնավորապես, անօրինական միգրացիա կազմակերպելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, մեր կարծիքով, առավել վտանգավոր է, քան նույն արարքը մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում կատարելը: Ուստի, արդարացված

պետք է համարել ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի վերն արդեն առաջարկված լրացուցիչ նոր մասում առավել ծանրացնող ևս մեկ հանգամանք նախատեսելը: Մասնավորապես՝ անօրինական միգրացիա կազմակերպելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք: Ընդ որում, որպես այլ ծանր հետևանք՝ տվյալ դեպքում կարող է գնահատվել հանցագործությունից տուժած անձի առողջությանը ծանր վնաս պատճառելը կամ նրա ինքնասպանությունը կամ դրա փորձը և այլն:

8. Հաշվի առնելով անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունները՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործությունն անհրաժեշտ է սահմանազատել պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելու, ինչպես նաև քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ իր արարքը ղեկավարելու ունակությունից ամբողջությամբ կամ մասամբ զրկված անձի՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելուն օժանդակելու կամ դա կազմակերպելու դրսևորումներից: Մասնավորապես.

– Երբ առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելուն նպաստելը կատարվել է՝ թեկուզ մուտքի կամ ելքի համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի կամ ելքի պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով, սակայն առանց շահադիտական նպատակի, նպաստողի արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 46-ի համապատասխան մասով և հոդված 469-ով՝ որպես պետական սահմանն ապօրինի հատելու հանցակցություն (դրդչություն, կազմակերպում կամ օժանդակություն): Մինչդեռ, երբ նույն արարքը կատարվում է շահադիտական նպատակով, առկա է ոչ թե պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելու, այլ անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմը. արարքը որակվում է որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցանքի կատարում:
– Քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ իր արարքը ղեկավարելու ունակությունից ամբողջությամբ կամ մասամբ զրկված անձի՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելուն օժանդակելու կամ դա կազմակերպելու պարագայում նշված արարքներն առանց շահադիտական նպա-

տակի կատարելը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 469-ի 2-րդ մասով. պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելը տվյալ դեպքում առկա չէ: Մինչդեռ, երբ նույն արարքները կատարվում են շահադիտական նպատակով, դրանք պետք է որակել ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով՝ որպես անօրինական միգրացիայի կազմակերպման կատարում:

– Պետական սահմանն ապօրինի հատելու և անօրինական միգրացիայի կազմակերպման սահմանազատման հիմնական չափանիշը սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունների՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշի (շահադիտական նպատակի) առկայության կամ բացակայության հիմնավորումն է:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ դրա արդյունքների հիման վրա ձևավորված տեսական դրույթները, եզրահանգումները և առաջարկությունները որոշակիորեն կզարգացնեն իրավունքի տեսության համապատասխան բաժինները: Բացի դրանից, նշված արդյունքները կարող են օգտագործվել նաև հետագայում, այլ հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված հիմնարար դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում, ինչպես նաև իրավաբանական բուհերում և Արդարադատության ակադեմիայում կազմակերպվող ուսումնական դասընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական սույն աշխատանքը նախապատրաստվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումն ու գրախոսությունը:

Տվյալ հետազոտության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ինչպես նաև եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության իրավական, տեսական, փորձառնական, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը,

հետազոտության արդյունքների արժանահավատության աստիճանը և փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Անօրինական միգրացիայի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, ներառում է երեք ենթագլուխ:

Առաջին ենթագլխում՝ «Բնակչության միգրացիայի էությունը, տեսակները և դրսևորման ձևերը» վերտառությամբ, քննարկվում են ներկայիս աշխարհում տարածված երևույթներից մեկի՝ միգրացիայի էության, տեսակների և դրսևորման հիմնական ձևերի հետ կապված հարցերը: Այդ առումով պարզաբանվում է, որ միգրացիան լայնածավալ և բազմաբովանդակ երևույթ է, որի բաղադրիչների դասակարգումը հիմնվում է բազմաթիվ բնութագրիչների (աշխարհագրական, ֆունկցիոնալ, ժամանակագրական, իրավական և այլն) վրա:

Երկրորդ ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումը» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում անօրինական միգրացիայի կազմակերպման դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումները: Այդ կապակցությամբ նշվում է, որ համապատասխան միջազգային իրավական ակտերը պայմանականորեն կարելի է դասակարգել երկու խմբի՝ համաշխարհային և միջպետական:

Երրորդ ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվությունն ըստ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության» վերտառությամբ, քննարկվում են անօրինական միգրացիայի կազմակերպման համար արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանող նորմերի հիմնական առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվում Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության պետությունների, ինչպես նաև մի շարք այլ արտասահմանյան երկրների (Ամերիկայի Միացյալ Նահանգների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Իրանի Իսլամական Հանրապետության) իրավական համապատասխան ակտերի վերլուծությանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվությունն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի» վերտառությամբ, ներառում է չորս ենթագլուխ:

Առաջին ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտը և օբյեկտիվ կողմը» վերտառությամբ, քննարկվում են ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ով նախատեսված հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշներին վերաբերող որոշ առանձնահատկություններ: Տվյալ համատեքստում վերլուծության են ենթարկվում ՀՀ օրենսդրության առավել հավանական և հաճախ հանդիպող այն խախտումները, որոնց վերաբերյալ հստակ պատկերացում ձևավորելը էական նշանակություն ունի քննարկվող արարքի պատշաճ որակման համար:

Երկրորդ ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը» վերտառությամբ, քննարկվում են անօրինական միգրացիայի սուբյեկտիվ հատկանիշների առանձնահատկություններիը: Նշվում է, որ ՀՀ քրեական օրենսդրության դրույթներին համապատասխան, քննարկվող հանցագործության պարագայում, հարց կարող է առաջանալ նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին: Առաջարկվում է որպես անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նախատեսել դրա կատարումը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

Երրորդ ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման առավել վտանգավոր տեսակները» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում անօրինական միգրացիայի կազմակերպման ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքների որակման հիմնախնդիրները: Առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես ծանրացնող հանգամանք, նախատեսել տվյալ հանցանքը մի խումբ անձանց կողմից, ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց դրա կատարելը: Շեշտվում է նաև նշված հոդվածը նոր՝ 4-րդ մասով լրացնելու անհրաժեշտությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «Անօրինական միգրացիայի կազմակերպման սահմանազատումը հարակից հանցագործություններից և վարչական իրավախախտումներից» վերտառությամբ, քննարկվում են տվյալ հանցագործությունը պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելուց, ինչպես նաև քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ իր արարքը ղեկավարելու ունակությունից ամբողջությամբ կամ մասամբ զրկված անձի՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելուն օժանդակելուց կամ դա կազմակերպելուց սահմանազատելու հիմնախնդիրները: Անդրադարձ է կատարվում նաև անօրինական միգրացիայի կազմակերպումը վարչական որոշ իրավախախտումներից սահմանազատելու հարցերին:

Ատենախոսության եզրակացության մեջ, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, ներկայացվում են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

– Միգրացիան (լատիներեն՝ migratio, migro, թարգմանաբար՝ գաղթ, վերաբնակեցում) հասկացվում է որպես բնակչության բռնի կամ կամավոր տեղաշարժ մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում՝ կապված մշտական կամ ժամանակավոր բնակավայրը փոխելու հետ: Ըստ այդմ, ընդունված է տարբերել արտաքին (միջմայրցամաքային և միջպետական) և ներքին

(ներպետական) միգրացիաներ, այդ թվում՝ միջշրջանային և գյուղական բնակավայրերից բնակչության վերաբնակեցումը քաղաքներում:

– Միգրացիան լայնածավալ և բազմաբովանդակ երևույթ է, որի բաղադրիչների դասակարգումը հիմնվում է բազմաթիվ բնութագրիչների վրա: Մասնավորապես, աշխարհագրական հատկանիշով ընդունված է տարբերել միգրացիայի արտաքին և ներքին, գործառութայինով՝ աշխատանքային, մշակութային-կենցաղային, ծառայողական (գործուղումներ) և ուսումնական, ըստ տևողության՝ ժամանակավոր, ճոճանակային (ռեգուլյար), մշտական և սեզոնային, ըստ շարժառիթների՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական և ընտանեկան-կենցաղային, իսկ օրինականության հատկանիշով՝ լեգալ (օրինական) և ոչ լեգալ (անօրինական) տեսակները:
– Անօրինական միգրացիան խիստ բացասական ազդեցություն է ունենում միգրանտների գտնվելու երկրի, ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական վիճակի վրա: Լուրջ մտահոգության տեղիք է տալիս կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության զգալի ընդլայնումը՝ կապված միգրանտների անօրինական ներմուծման և դրան առնչվող այլ հանցավոր գործունեության հետ: Տարեցտարի արձանագրվում է անօրինական միգրանտների կողմից և նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների աճ: Անօրինական միգրացիոն գործընթացները հաճախ սպառնալիք են ստեղծում դրանց մեջ ներգրավված միգրանտների կյանքի, առողջության, ազատության, պատվի, արժանապատվության և անվտանգության համար:
– Բացասական տվյալ երևույթին արդյունավետ հակազդելու նպատակով գործարկվում են միջազգային իրավական կառուցակարգեր, որոնք նպաստում են անօրինական միգրացիայի դեմ պայքարում պետությունների համախմբմանը և համագործակցությանը: Այդ կապակցությամբ ընդունվում են համաշխարհային և միջպետական բնույթի տարատեսակ միջազգային իրավական ակտեր:
– Իրանի Իսլամական Հանրապետության իսլամական քրեական պատիժների մասին օրենքը չի պարունակում անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվություն սահմանող իրավակարգավորում: Այլ կերպ ասած՝ տվյալ երկիրը դասվում է այն պետությունների շարքը, որտեղ միջազգային լուրջ խնդիր հանդիսացող վերոհիշյալ արարքը չի դիտարկվում որպես հանրորեն վտանգավոր երևույթ՝ հանցագործություն:
– ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմի իմաստով հարկ է հասկանալ ցանկացած փաստաթուղթ՝ անկախ այն կազմողից, հաստատողից կամ տրամադրողից: Իսկ ներկայացվող փաստաթղթի կեղծ լինելու առումով պետք է հասկանալ իրավաբանական նշանակություն

ունեցող տեղեկություն պարունակող նյութական կամ էլեկտրոնային այն կրիչները, որոնցում առկա տեղեկատվությունը խեղաթյուրված է, չի համապատասխանում իրականությանը:

– Անձի արարքում շահադիտական դրդապատճառը (շարժառիթը, դրդումը) բացահայտելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգամանքը, որ դրա հիմնական բովանդակությունը նրա մղումների ուղղվածությունն է նյութական օգուտ ստանալուն, ապօրինի հարստանալուն: Այլ կերպ ասած՝ արարքը տվյալ դեպքում ոչ թե նպատակին հասնելու միջոց է, այլ ինքնանպատակ, համապատասխան դրդումը բավարարելու եղանակ: Այսինքն՝ շահադիտական շարժառիթը միշտ ենթադրում է նաև շահադիտական նպատակի առկայություն: Մինչդեռ հակառակը պնդելն անհնար է, քանզի նյութական օգուտ ստանալու նպատակը կարող է պայմանավորված լինել նաև այլ (ոչ շահադիտական) շարժառիթներով, օրինակ՝ ինքնահաստատվելու մղումով, փառասիրությունից դրդված և այլն:
– Քննարկվող հանցանքը մարդու թե՛ կյանքի և թե՛ առողջության համար վտանգավոր պայմաններում կատարված որակելու համար չի պահանջվում, որպեսզի փաստացի նրան մահ կամ նրա առողջությանը վնաս պատճառվի: Այսինքն՝ նշված հետևանքների փաստացի առաջացումը դուրս է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի շրջանակներից և պետք է որակվի լրացուցիչ: Ընդ որում, այդ առումով որևէ նշանակություն չունի՝ մարդու մահվան կամ նրա առողջությանը վնաս պատճառելու նկատմամբ հանցավորը դրսևորել է դիտավորությո՞ն, թե՞ անզգուշություն:
– Անօրինական միգրացիայի կազմակերպումը կարող է գնահատվել որպես անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում կատարված, եթե հանցավորը գիտակցում է, որ տվյալ իրադրությունում առկա են հանգամանքներ, որոնք կապված են մարդուն ստորացնելու, նսեմացնելու, արժեզրկելու հետ: Ընդ որում, արարքի քրեաիրավական գնահատականի առումով, տվյալ դեպքում, որևէ նշանակություն չունի՝ նվաստացումն իրականացվում է պարբերաբա՞ր, թե՞ մեկ-անգամյա ակտով: Միևնույն ժամանակ, անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը (այդ թվում՝ պարբերաբար կատարելով), տվյալ դեպքում, կլանվում է անօրինական միգրացիայի կազմակերպման քննարկվող ծանրացնող հանգամանքով, ուստի լրացուցիչ չի որակվում ՀՀ քր. օր.-ի հոդված 194-ով (հոգեկան ներգործությունը):
– Սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաև բնակվելու կանոնները խախտելն անօրինական միգրանտի կողմից կատարելը, որը կապված չէ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու հետ, պետք է որակել միայն ՀՀ ՎԻՎՕ-ի հոդված 200-ով: Մինչդեռ սահմանային շերտ նրա մուտք գործելը կամ այնտեղ գտնվելը կամ բնակվելը ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով շահադիտական նպատակով կազմակերպելը միանշանակ հանցավոր է և որակվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով:

– ՀՀ ՎԻՎՕ-ի հոդված 201-ում, ըստ էության, նախատեսված են Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների (այդ թվում՝ քաղաքացիություն չունեցող անձանց) գտնվելու (բնակվելու, աշխատելու) կամ Հայաստանի Հանրապետության տարածքով նրանց տարանցիկ երթևեկության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի այն խախտումները, որոնք զանցանք են համարվում: Մինչդեռ նշված խախտումները շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով, պետք է որակել որպես ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործություն:

– Առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ը նախատեսել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«1. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում կամ

3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝
1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ
2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք՝
պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով»:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Арутюнян Н. Исторические предпосылки развития законодательства, предусматривающего уголовную ответственность за организацию незаконной миграции в странах СНГ // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 2 (8), 2022, էջեր 114-125:
2. Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (9), 2023, էջեր 129-135:
3. Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմը բնութագրող որոշ առանձնահատկությունների մասին // Պետություն և իրավունք, № 1 (9), 2023, էջեր 129-135:
4. Հարությունյան Ն. Բնակչության միգրացիայի էության, տեսակների և դրսևորման ձևերի մասին // Դատական իշխանություն, № 1 (9), 2023, էջեր 129-135:
5. Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորման մասին // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (11), 2024, էջեր 101-109:
6. Առաքելյան Ս., Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվությունն ըստ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, № 2 (41), 2024, էջեր 23-38:
7. Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի կազմակերպման սուբյեկտիվ հատկանիշներն ըստ ՀՀ քրեական օրենսդրության // Դատական իշխանություն, № 7-9 (301-303), 2024, էջեր 73-84:
8. Հարությունյան Ն. Անօրինական միգրացիայի կազմակերպման առավել վտանգավոր տեսակներն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 2 (12), 2024, էջեր 84-95:

АРУТЮНЯН НАРЕК ВААГНОВИЧ

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ОРГАНИЗАЦИЮ НЕЗАКОННОЙ МИГРАЦИИ: ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

РЕЗЮМЕ

Изучение криминогенной обстановки в мире вообще и постсоветских государствах в частности свидетельствует, что незаконная миграция стала неотъемлемой частью структуры преступного бизнеса. Она со временем превратилась в хорошо организованную «теневую коммерческую» деятельность на международном уровне, а также сопряжена с такими видами транснациональной организованной преступности, как незаконная торговля наркотиками и оружием, траффикинг, незаконный оборот органов и тканей человека.

Основными тенденциями развития ответственности за рассматриваемое преступное посягательство являются: во-первых, постепенное выделение деяний, направленных на организацию незаконной миграции, в самостоятельный состав преступления; во-вторых, переход ответственности за данное посягательство от группы преступлений против государственной власти к категории общественно опасных деяний, причиняющих вред порядку управления; в-третьих, усиление ответственности за совершение данного преступления.

В целях эффективного противодействия данному негативному явлению задействованы международно-правовые механизмы, способствующие сотрудничеству государств и консолидации сил в борьбе с незаконной миграцией. Подчеркивается, что в данном направлении принимаются также различные международно-правовые акты, которые условно можно разделить на две группы: всемирные и межгосударственные.

В отличие от государств – членов Евразийского экономического союза, в большинстве упомянутых зарубежных стран ответственность за рассматриваемое преступление устанавливается не только Уголовным кодексом, но и другими нормативными правовыми актами, регулирующими отдельные отрасли общественных отношений. В то же время в Законе об исламских наказаниях Исламской Республики Иран, соседней с Республикой Армения, не предусмотрены нормы, устанавливающие ответственность за организацию незаконной миграции. В этой связи подчеркивается, что данная страна относится к тем государствам, в которых организация незаконной миграции не рассматривается кам общественно опасное, преступное явление.

Как в прежнем, так и новом (действующем) Уголовном кодексе РА организация незаконной миграции предусмотрена в ряду преступлений против

порядка управления. То есть, в широком смысле родовым объектом исследуемого преступления являются общественные отношения, направленные на обеспечение нормального функционирования государственной власти, а видовым – порядка управления. В то же время в вопросе определения видового и непосредственного объектов организации незаконной миграции в теории уголовного права имеются существенные расхождения во мнениях.

Объективная сторона рассматриваемого преступного деяния проявляется именно в организации соответствующих общественно опасных и противоправных действий. Причем организатор не является непосредственным участником незаконной миграции (точнее – незаконным мигрантом). А именно, субъект преступления, предусмотренного статьей 470 Уголовного кодекса Республики Армения, способствует этому процессу, обеспечивает его, создавая необходимые условия для осуществления последнего.

Субъектом преступления, предусмотренного ст. 470 Уголовного кодекса РА, может являться любое вменяемое лицо, достигшее 16-летнего возраста. Кроме того, в соответствии с положениями действующего уголовного законодательства РА, при совершении данного преступления может возникнуть также вопрос об уголовной ответственности юридических лиц.

Данное преступление характеризуется прямым умыслом и корыстной целью. В УК РА для обозначения смысла «корысти» законодатель испольует различную терминологию, что неприемлемо. В данной связи предлагается в качестве обязательного признака субъективной стороны организации незаконной миграции предусмотреть совершение деяния из корыстной или иной личной или групповой заинтересованности.

Предлагается в п. 1 ч. 3 ст. 470 УК РА в качестве отягчающего обстоятельства организации незаконной миграции предусмотреть совершение преступления группой лиц, как по предварительному сговору, так и без него. Необходимо также дополнение упомянутой статьи УК новой: 4-ой частью, в которой предлагается предусмотреть наиболее отягчающие обстоятельства организации незаконной миграции: 1) совершение данного преступления преступной организацией и 2) то же деяние, повлекшее по неосторожности смерть человека или иное тяжкое последствие.

В результате исследования представлен также ряд других предложений, направленных на повышение эффективности уголовно-правовой борьбы с организацией незаконной миграции.

Диссертация подготовлена на кафедре уголовного права юридического факультета ЕГУ. Результаты исследования отражены в 8 научных статьях, опубликованных автором. Ряд положений диссертации были представлены диссертантом в рамках докладов, представленных на кафедре

HARUTYUNYAN NAREK VAHAGN

CRIMINAL LIABILITY FOR ORGANIZING ILLEGAL MIGRATION: THEORETICAL AND PRACTICAL PROBLEMS

SUMMARY

The study of the criminogenic situation in the world in general and the post-Soviet states in particular shows that illegal migration has become an integral part of the structure of the criminal business. It has evolved over time into a well-organized "shadow commercial" activity at the international level, and is also associated with such types of transnational organized crime as: the illegal trade in drugs and weapons, trafficking, illegal turnover of human organs and textures.

The main tendencies in the development of responsibility for the criminal offense in question are: firstly, the gradual separation of acts aimed at organizing illegal migration into individual composition of the crime; secondly, the transfer of responsibility for this encroachment from a group of crimes against state power to the category of socially dangerous acts that harm the management order; thirdly, the strengthening of responsibility for the committing of this crime.

In order to effectively counteract this negative phenomenon, international legal frameworks are launched, which contribute to the cooperation and consolidation of forces in the fighting illegal migration. It was emphasized that various international legal acts are adopted in this regard, which can be conditionally classified into two groups: global and interstate.

Unlike the countries of the Eurasian Economic Union, in most of the mentioned foreign countries, responsibility for the discussed crime is established not only by the Criminal Code, but also by other legal acts regulating certain spheres. At the same time the Law on Islamic Punishments of the Islamic Republic of Iran, neighboring Armenia, does not provide for legal norms establishing liability for organization of illegal migration. In this regard, it is emphasized that this country is one of those states in which the organization of illegal migration is not considered as a socially dangerous, criminal phenomenon.

Both in the old and the new (current) Criminal Code of the Republic of Armenia, the organization of illegal migration is envisaged in a number of Crimes against the order of administration. That is, in a large sense, the generic object of the crime under study is social relations aimed at ensuring the normal functioning of state power, and the varietal object is the order of management. At the same time, there are significant differences of opinion in the theory of criminal law on the issue of determining the varietal and direct objects of the organization of illegal migration.

The objective side of the discussed crime is manifested in the organization of the

corresponding illegal actions. What is more, the organizer is not a direct participant in illegal migration. The subject of the crime of the crime provided for in the Article 470 of the Criminal Code of the Republic of Armenia, contributes to this process, ensures it, creating the necessary conditions.

This crime is characterized by direct intent and selfish purpose. In the RA Criminal Code the legislator uses different terminology to denote the meaning of "self-interest," which is unacceptable. In this regard, it is proposed to provide for the committing of an act out of selfish or other personal or group interest as a mandatory feature of the subjective side of the organization of illegal migration.

In Paragraph 1 of Part 3 of Article 470 of the Criminal Code of the Republic of Armenia, as an aggravating circumstance for organization of illegal migration, provide for the commission of a crime by a group of persons, both by prior conspiracy and without it. In addition, it is needed to supplement the mentioned article of the Criminal Code with a new one: the 4th part. It, in particular, proposes to provide for the following most aggravating circumstances for organization of illegal migration: 1) the commission of this crime by a criminal organization and 2) the same act, which through negligence resulted in the death of a person or another serious consequence.

As a result of research, a number of proposals were put forward aimed at improving the effectiveness of criminal legal fight against organizing illegal migration.

The dissertation was prepared at the Chair of Criminal law of the Faculty of law of the YSU. The results of the study are reflected in 8 scientific articles published by the author. A number of provisions of the dissertation were presented by the candidate in the framework of scientific reports presented at the Chair of Criminal law of the Faculty of Law of the YSU.